

ւալի է, որ չէ մշակած. ըսել կուգեմ՝ պատկերի եւ պատմածի իր վարժութիւններէն չէ հրաժարած եւ քատերական դիպախաղը լարելու համար ինկած է ֆուսբի եւ բռնագրօս յարդարանքի մէջ: Մէկ երկու նման փորձեր, եւ անկա պիտի կրնայ ազատել իր յօրինումը այս քերիներէն: Կը հաւատամ, թէ մէկ կամ երկու արարնոց պատկերներ յարմարագոյն գետինն են՝ տուամքի՛ք գգայարանէ՛ք գուրկ, բայց սուր հեգնութեամբ քրքռում իր գգայնութիւնը յայտնաբերելու: Ըրած է ասիկա թլկատենցին յաջողութեամբ: Յակոբ Մնձուրին կուգայ արեւստի աւելի ընդարձակ հանգանակներէ ետքը: Անգամ մը որ չէգոֆացիին իր քերութիւնները, իր առաւելութիւնները պիտի կրնան լիովին արդարացնել իրենց գիրքնէք:

9. *Ուրիշ Թատերադիրներ.*— Ասոնցմէ դուրս, Փարիզ ու «Հայրենիք»ի մէջ դարձեալ քանի մը խաղերու նախադրումն են ըրած: Կ. Մեհեանի եւ Լիպ. Նազարեանցի խաղերը հոգեբանական մշակումի փորձեր են, որոնց մէջ բանաստեղծութիւնը քիչ մը շատ կը մտնէ, խեղդելու աստիճան անձերու դիմագծերը իր մշուշին մէջ: Կը կարդացին իրենց երաժշտական արձակի շնորհիւ: Թատրոն չեն անշուշտ, քանի որ քատրոնը պայմանագրող հիմնական

նկարագիրը — գործողութիւն եւ շարժում — կը պակսի անոնց:

Այս առնեմն ետքը, քատրոնի մօտաւոր ապագայովը զբաղիլ միամտութիւն պիտի ըլլար իմ կողմէ. առնեմն դժուարն է ան գրելու սեռերէն, եւ մեր ժողովուրդը բոլորովին անտրամադիր՝ առանկ ինքնին դատապարտած սեռ մը կորուստէ փրկելու: Մարգարէութիւնը անիմաստ է, բայց լատենտութիւնն ալ ծիծաղելի, երբ 8-10 փորձերու փաստը մէջտեղն է: Մեր դերասանները (պէտք է վերջապէս յիշել ատոնք, քանի որ մեծագոյն բաժինը իրենցն է քատրոնի այս սպառումին մէջ) կարելին ըրին, որպէս զի մեր բանիմաց, արեւստը նաշակելու ընդունակ դասակարգը պաղի ընդմիջու հայեցի բնմէն, չկրնալով համարձեղ մեր ուսմանքիսմը, որ միանեծան կիշխէ Ամերիկայէն մինչեւ եգիպտոս: Թո՛ղ բարով վայելեն իրենց «Քին»երը, «Ուրիշ Ակոստա»ները, յիշելու համար միայն քանի մը համբաւաւոր օրինակներ: Տասը տարի ետք, իրենց կեղծ ծամերն իսկ փոխադրող մարդու պիտի չհանդիպինք այլեւս քեմի վրա: Գուցէ կը պիտիմ, մոռնալով քարեկեղանի հանդիսանքները, վարդանանց նիւրած հոպիտութիւնները...

Գահիրէ.

Դրի առաւ՝ Բ. ԹԱՇՆԱՆ

ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱՅԻ ԱՆՏԻՊ ՏԱՂԵՐ

«Գրական Թերթ»-ի 30 յունիս, № 17-ում հրատարակած են Սայեաթ Նովայի երկու անտիպ տաղերը: Մէկը՝ «Խաբար գընաց բլրուլի մօտ»՝ տրամադրել է Գ. Ասատուրը, միւսը՝ «Նա՛ր, քո կարօտդ»՝ Գ. Թարվերդեանը:

Առաջինի մասին Ասատուրը ասում է, թէ այդ տաղի մի փոփոխակը ինքը, առնելով Սայեաթ Նովայի օրդի Օհանի Դաւթարից, հրատարակել է 1903 թ. «Ազգ. Հանդէս»-ի 10րդ գրքում, բայց

«Ներկայ վարիանսը բոլորովին նոր է եւ շատ է տարբերուում առաջինից»: Տաղը յայտնագործւած է Գէորգ Ավակերդեանի թղթերում, որոնք գտնուում են Հայաստանի Թանգարանում եւ զբաղւած է վրացերէն տաղերով:

Ներկորդ տաղը Գ. Թարվերդեանը լրտեսել ու զրի է առել 1908 թ. մարտին: Ասել է հաւաքարցի 85 տարեկան Աննա Մուրադեանը, «որ գիտէր բազմաթիւ երգեր, հեքիաթներ, առակներ եւայլն:

Իւր ասելով՝ Հատերի հետ նաեւ Սայեաթ
Նովայի երգերը նա սովորել է ջաշեկ
Ժամանակ իւր քեռի տերացու «Գեւուր»-

բեց», որը զիտէր ճիւղնուր ածել եւ
խաղ կանչել»:

Ա. ԽԱՐԱՐ ԳԵԱՅ ԲԼԲՈՒԼԻ ՄՕԴ

Խաբար գընաց բլբուլի մօդ. «Վարբըն
ֆու գալուն մընում է.
ձըլսկընիբըն բացրացրիլ է, վըրէք շուր
գալուն մընում է.
Առաւուտան գանգակի պէս ֆաղցր ձէն
տալուն մընում է»:
Բլբուլն ասաւ. «Ձիմ կարա գայ, պուն-
պունէն լալուն մընում է»:

Վարբըն ասաւ. «Խային բլբուլ, նալայ
գայ ֆու էքիբարին.
Անցկացաւ ապրիլ, մայիսըն, մէկ օր չը
հարցըրիք եարին»:
Ձեքուդ մուրազին հասիլ էր, տիս՝ ինչ
արաւ ֆաւրար դարին.
Փահրադը իրան սըպանից, Շիրին լսան-
ջալուն մընում է:

Վարբըն ասաւ. «Իմ բլբուլին ալ պուն-
պունէն ո՛նց կու լսափէ.
Քանի վաղ է, դարիք բլբուլ, դուն ֆու
բաղի նամփէն չափէ:
Հագար գուզէ դայրաք անէ, Սիպոս
Դիւր կուրըն կապէ.
Էլի վիբջումը մէյդանըն Ռոստոմի Զա-
լուն մընում է»:

Հագրեմէն մէկը չին ասի, քէգուզ աշ-
խարքը դիփ գովին.
Դարունիին ծաղկիբլով հուտ կուտաս
ամաւուայ հովին.
Հենչամֆ ըլի դուն սաղ ըլիս, ջուրըն
տանէ Սայեաթ Նովին.
Շահարազի լալի նըման Շահըն վրէք
գալուն մընում է:

Բ. ԵԱՐ, ՔՈՒ ԿԱՐՕՏԴ

Նա՛ր, ֆո կարօտդ ֆաշում իմ անմահա-
կան ջրի նման,
Ռա՛հմ արա, դուռդ իմ էկի, օջախի ու
փիթի նման,
Սէրդ սիրտս կէս է արիլ ջահվարդարի
քրի նման,
Էշլիդ ալաւը ինձ վառից բարեկական
հրի նման:

Էլ ֆանի՞ գցիս սարէտար, ու՛հմ արա,
ա՛յ բէմուրվաք,
Վուչ աչկումս լուսի մնացի եւ վուչ
գեառդանումս քաղաք,
Թէ պատժում իս էդ էլ բան է, տան-
ջեցիր ինձ քամամ, բաբաք,
Էրամ հոգիս հովցըննիւ բղիթի դու
ախալըրի նման:

Վնց որ կարօտ մի ուխտաւոր դուռդ է
էկիլ Սայեաթ Նովէն,
Անց է կացի ամէն չարկապ, ամէն ար-
կիլ Սայեաթ Նովէն.
Թէ որ կուրցնիս, էլ չիս գտնի ճարից
մէկ իլ Սայեաթ Նովէն,
Նա մէ՛կ հատ էր աշխար էկաւ, ֆանց
մի դարիք հուրի նման:

ՄԻ ՔԱՆԻ ՃՇՏՈՒՄՆԵՐ

(Յ. Զարեանի «Սայեաթ Նովայ»ի առթիւ)

Համակրելի «Վէմ» հանդէսի մէջ լոյս
տեսաւ պ. Յովհաննէս Զարեանի շնոր-
հալի յօդաւոր Սայեաթ Նովայի մասին,
որի ինչ-ինչ կէտերի առթիւ կուզէի ա-

նել մի ֆանի բռուցիկ դիտողութիւններ:
Ա. Հանդէսի Ա. հատ. էջ 37 տաւած
է. «Յամեմայն դէպս, նշանաւոր բանաս-
տեղծ Հաֆըզի օրերից արդէն սովորա-

կան է, որ բանաստեղծներն իրենց քնարական ոտանավորները վերջացնում էին իրենց անան, ընդհանրապես, ծածուկ անուն յիշատակութեամբ: Պարսիկ բանաստեղծներին այս սովորութիւնն անցաւ եւ աշուղներին» եւայլն:

1) Այդ սովորութիւնը սկսում է ոչ թէ Հաֆէզից, որ ապրում էր 1300-1389 թ.թ., այլ պարսից գրականութեան հէնց սկզբի շրջանից. այսպէս, մի օրինակ բերեմք մոյնիսկ ոչ առաջ բանաստեղծներից, այլ Դադիդիից, Ֆերդովսիի մեծանուն մախրուդից, որ ապրում էր հաւանաբար Սամանիդ Նուհէին Մանսուրի ժամանակ (976-997): Նա իր հռչակաւոր ղազալի մէջ, որտեղ ի միջի այլոց երեսան է գալիս նրա զբաղաշատակամութիւնը, դնում է իր բանաստեղծական անունը (Դադիդի),*) ինչպէս ընթերցողը կը տեսնի այդ ղազալի ստորեւ բերած մեր թարգմանութիւնից:

ՂԱԶԱԼ ԴԱԴԻԴԻ

Սի'րտիւմ, ահա գցեց ամպը գարնային
Մայիսի խալաթը երկրի ուսերին.
Աշխարհն այնպէս է մեղմացել, որ
դաշտում
վազքը խաղ է բռնել հետը սարայծին:
Գետինն արինոտած դիպակ է կարծես,
Օդը մուշկ է դարձել՝ բեհեզը հագին.
Ասես անապատում գինով ու մուշկով
Պատէր ես թելադրում սիրածդ էակին:
Կուտքը**) դէմքը գմայլիչ յակինթ է
կտրել
Մեհեհանի հանդերձի գոյն ունի գինին.
Աշխարհը պննել է ինչպէս սիրամարգ,
Մի կողմը խորդուբորդ, ողորկ է միւս-
դին:
Վարդից վարդաջրի բուրմունք է ծո-
քում,

*) Նրա իսկական անունը ենթադրւում է Աբու Մանսուր Մոհամմադ Էբնէ Մոհամմադ Էբնէ Ահմադ:
**) Սիրուհին:

Ասես վարդի բոյրը խառնած է վարդին:
Դադիդին ընտրել է լույ չորս յատկու-
թիւն
Լաւ ու վատից, որ կայ երկրի երեսին.
Յակինթ շրքունք, ապաչանգի**) հեծե-
ծանք
Զարդուշտի***) կրօնն ու կաս կարմիր
գինին:

2) Յիշեալ ոտանավորները ոչ թէ «քնարական ոտանավորներ» էին առհասարակ, այլ նրանց մի տեսակը՝ այսպէս կոչւած ղազալներ, որոնց մի նմոյշը բնագրի տաղաչափութեամբ բերած է վերեւ: Այդ ղազալները, ինչպէս կարելի է տեսնել վերոյիշեալ նմոյշից, որոշ ձեւ ունին եւ ներքին են սիրային ապրումների, կամ միատիպական բովանդակութիւն ունին: Ղազալ արարելն բաւ է, որ մեր գրականութեան մէջ գործ է ածւում «գազլի» ձեւով՝ ուսական աղաւաղած արտասանութեամբ: Այս ոտանավորների առաջին եւ երկրորդ տաղերը յանգւորւած են, երրորդն ազատ է, չորրորդը մոյնայանգ ա-ի եւ բ-ի հետ. մոյնայանգ են եւ 6-րդ, 8-րդ եւ 10-րդը եւայլն մինչեւ վերջ. իսկ 5-րդը, 7-րդը, 9-րդը եւայլն ազատ են:
3) Ղազալ է կոչւած այս ղազալները վերջանում էին ոչ թէ «իրենց անան», ընդհանրապէս ծածուկ անան» այլ զբաղական կեղծանունի յիշատակութեամբ: Այդ կեղծ անունը կոչւում էր բախալուս:

Բ. Սոյեաթ Նովայի անունը. ինչպէս նիշտ բացատրւած է յօդւածում, Սոյեաթ Նովա կազմւած է երկու բառից, այդ բառերի առաջինն է արաբերէն «սեյյեթ», յոգնակին սաղաթ, որ նշանակում է տէր, իշխան, հրամանատար: Այդ անունն իրենց վրայ են առել Մո-

**) Վազեմի Էրաժչտական գործեր. քնարի մի տեսակն էր՝ ծուռ գլխով:
***) Զարդուշտ - Զրադաշտ, Զարա-տուշթրա:

համեմէն սերունդները, որոնք մեզնում քուրմական արտասանութեամբ յորջորջուում են սէյիդներ: Այստեղից եւ Սայեաք Նովայի ժառանգների ազգանունը՝ Սէյիդով: Ինչ վերաբերում է Նովային, այդպիսի բառ չկայ ոչ պարսկերէն եւ ոչ արաբերէն լեզուներում: Կայ պարսկերէն երկու բառ նով «նոր, երիտասարդ» — նշանակութեամբ եւ նալա, որ նշանակում է ձայն, հնչիւն, երգ: Այս բառերից առաջինը չի կարող վերջն « ընդունել. ուրեմն «նովա» չի կարող դառնալ, իսկ երկրորդը ռուսական ռով քառի ազդեցութեան տակ ռուսահայկական կամ ռուսավարացական հողի վրա Նովա-ի է փոխել (պարսկերէնում Նովա անհասկանալի է: Այսպիսով Սայեաք Նովայի նիշտ ձեւն է Սէյիդի Նովա կամ աւելի ճիշտ՝ պարսկական էզաֆէով, այսինքն ածականը գոյականին շողկապաղ է մասնիկով (որ ընկել է հայերէնում)՝ Seyyed-Nava, որ նշանակում է իշխան երգերի կամ տաղասացութեան վարպետ, ինչպէս ինտուիցիայով նիշտ կոսեի եւ Յովի-Թումանեան եւ Վալ. Բրիւսով:

Գ. Սայեաք Նովայի հօր կոչումը.— «Մահտեսի» բառը այսպէս կոչւած ժողովրդական ստուգաբանութեամբ առաջացել է արաբ եւ պարսկական մողաղդասի բառից՝ moqaddasi որտեղ Գ. յետմային խուլ հնչիւն է, ինչպէս վերացերէն ծղալի (ջուր) քառի մէջ (նոյնը եւ ճազիլ քառում): Moqaddas արաբերէն նշանակում է սրբազան. իսկ քէյտ օլ մօգաղդաս beit ol moqaddas այսինքն սրբազան տուն, կամ սրբազան տաճար կոչւում է Երուսաղէմը: Իսկ ինչպէս յայտնի է, պարսկները / (i) մասնիկ աւելացնելով սրբավայրերի անունների վրա՝ նշանակում են բացի այդ վայրերի բնակիչներից նաեւ այն մարդկանց, որոնք ուխտ են գնացել այդ

վայրերը. այսպէս Մահադ (Մեշեդ) ֆալֆի անունով մաշհադի (մեշեդի) անւանում են ոչ միայն մեշեդի բնակիչներին, այլ եւ այն բոլորին, որոնք այցելել են ուրբերոյ էմամ Ալի բէն Մուսա առ Ռեզայի դամբարանին Մաշհադում. այսպէս եւ ֆաբալայի (kərbala-yi), կամ ինչպէս մեզնում աղաւաղւած քուրքերէն յորջորջումով արտասանում են՝ Բալբալայի, կոչումին այն ուխտաւորներին, որոնք այցելել են էմամ Հոսեյնի անինին Քարբալայում: Նոյնիսկ հաջք բառին (հաջ ար նշանակում է ուխտաւոր), պարսկները հաջի ձեւն են տւել, նշանակել ցանկանալով մուսուլմանական մեծ սրբավայրերի՝ Մեկկայի եւ Մեդինայի ուխտաւորներին:

Այս ձեւով կազմւել է եւ մողաղդասի բառը արաբական անունից եւ պարսկական ածանցից, որ նշանակում է Երուսաղէմի ուխտաւոր. այդ նշանակութիւնը պահել է եւ մեր աղաւաղւած մահտեսի բառը: Այդ պատճառները սակայն նախնական ձեւով շնորհւել է եւ եկեղեցիներում (որպէս Երուսաղէմի նմանող վայրերում) ծառայութիւններ անող մղղսիներին, որոնց տիպը անմահացրել է Խ. Արովեանը իր «Վերջ Հայաստանի»-ում:

Մնում է լուծել այն խնդիրը, քէ Սայեաք Նովայի հայրը մահտեսի էր իսկական մտով, քէ՞ մղղսի, այսինքն եկեղեցու ստորին պաշտօնեայ: Ոչ մի հարկադրանք չկայ վերջինը ենթադրելու, երէ ի նկատի ունենանք, որ նա Հալէպցի էր, սակ է ամենայն հեշտութեամբ Երուսաղէմ այցելած մի անձնաւորութիւն եւ ուրեմն իսկական մահտեսի, մանաւանդ որ որդին հօրը այդ իսկ պատճառներն է շնորհում:

Ռ. ԱՐԲԱՀԱՄԵԱՆ

